Պատասխան

From: Ashot Barseghyan (a.barseghyan@himnadram.org)

To: [redacted]

Date: Thursday, January 21, 2021, 01:05 PM GMT+4

Հարգելի Մուշեղ,

Նախ շնորհակալություն հիմնադրամի գործունեության մասին հետաքրքրվելու համար, հուսով եմ ինքներդ նվիրատուներից մեկն եք համահայկական դրամահավաքի և այդ է նաև պատճառը, որ հետաքրքրվում եք համայն հայության կողմից հավաքագրված գումարների ծախսման նպատակային լինելով:

Ձեր հարցմանը պատասխանելը ավելի վաղ տեղի չէր ունեցել, քանի որ բարդ ժամանակահատված էր Ամանորից առաջ և հիմնադրամի փոքրիկ թիմը ողջ ուժերը կենտրոնացել էր սփյուռքից եկած հումանիտար օգնությունը հասցեատերերին հասցնելով, արցախցի տեղահանվածների հրատապ կարիքները մեղմելու, նրանց և զոհված զինծառայողների փոքրիկների համար Ամանորը փոքրիկ տոն դարձնելու գործին: Ֆիզիկապես չենք հասցրել անդրադառնալ նաև այլ նամակների, որոնց պատասխանը այժմ հերթով տալիս ենք:

Ասեմ, որ Հոգաբարձուների խորհրդում ունենալով Հայաստանի և սփյուռքի հեղինակավոր գործիչներ, մեկենասներ, պաշտոնատար և հոգևոր հայրեր՝ Համահայկական հիմնադրամը իր գործունեությունը ծավալում է բացառապես նրանց անմիջական մասնակցությամբ և որոշումների համաձայն, ուստի մի շարք ստրատեգիական և մասնագիտական որակավորման հարցեր, որոնք դուք բարձրացնում եք, քննարկվում և որոշվում են հենց այստեղ: Մյուս կողմից, նվիրաբերությունների ստվար հատված փոխանցում կատարելիս նշում է խնդրանք ցանկություն կոնկրետ ուղղության տրամադրել իր գումարը, կամ ավելին՝ նշում բուժ հաստատության անունը, ում կուզենար ուղղվեին գումարները: Այսպես,օրինակ՝ մեկ միլիոն ԱՄՆ դոլարից ավել գումար փոխանցվեց «Զինծառայողների ապահովագրման հիմնադրամին»: Պրոթեզավորման համար բանակցում ենք ոչ թե երկու, այլ երեք կենտրոնի հետ, որոնցից մեկում «Հայրենիքի պաշտպանի վերականգնողական կենտրոնում» արդեն տեղադրված են սարքավորումները, սակայն յուրաքանչյուր զինվորի պրոթեզավորման գործընթաց և պրոթեզի հետագա սպասարկում խստորեն վերահսկվելու է հիմնադրամի կողմից և որևէ գումար «ըստ հայեցողության» չի փոխանցվում և չի փոխանցվելու որևէ կազմակերպության: Մեր տրամադրած որևէ օժանդակություն ծառայում է զինծառայողների առողջության վերականգնմանը համաձայն պայմանագրային պարտավորությունների, որոնք շարադրվում են հիմնադրամի կողմից: Այս պարագայում ընտրության որևէ հարց չկա և հաճախ ընտրվում է հաշմանդամների համար հարմարավետ հասանելի լինելու հարցը, որտեղ ամբողջական վերականգնողական բուժօգնությունն է տրամադրվում, նաև քանի որ գերխնդիրը հասցեական օգնություն տրամադրել էն դրա կարիքը ունեցողներին: Պրոտեզավորման կարիք ունեցողների քանակները պարբերաբար ճշտվում են համապատասխան կառույցների հետ, այն՝ Սոց. ապ. և Առողջապահության նախարարությունների համապատասխան բաժիններ: Վերջերս հրապարակված բազմաթիվ հարցազրույցներում հիմնադրամի գործադիր տնօրեն Հայկակ Արշամյանը բազմիցս նշել է, որ զինծառայողների առողջության վերականգնումը կազմակերպելու համար գումարները տրամադրվելու են այնքան, ինչքան որ անհրաժեշտ է:

Հիմնադրամը համագործակցում է բազմաթիվ կազմակերպությունների հետ, որի մասին ինֆորմացիան տեղադրում է իր տարեկան հաշվետվություններում հանդեսներում, դրանք հանրայնացվում են կայքում:

Այլ հարցերի դեպքում կարող եք զանգահարել կամ գրել:

Հարգանքով

[redacted]

Աշոտ Բարսեղյան

Ashot Barseghyan

Marketing & PR Adviser

HAYASTAN ALL ARMENIAN FUND

26 Baghramyan Ave., 0024, Yerevan, RA

Phone: (+374 10) 52 15 05

Web: www.himnadram.org